





այսմ հասարակութեան մասին այսքանով բաւականացնել, իսկ այսուհետեւ յոյս ունենալ նոցա շուտ չուտ հրապարակ հանել լրագրող միջոցով, և միմիայն կը հարցնեմ ձեզ մի քանի հետաքրքրական լուրեր, որոնք կը հաստատեն իմ վերը գրված տողերը: Այս լուրերը իսկապէս նրանց վրա է, որոնք իրանց սխալագործութիւններով և կեղծուպատիր խօսքերով մեծ գերեր են կատարում անկաներից մեծ մեծ խօսող և հրապարակ չը դուրս եկող մարդիկներին մէջ:

Երկու տարի առաջ Սիմֆերոպոլի հայոց եկեղեցու համար երեք տարի ժամանակով երեսփոխան ընտրվեցաւ պ. Թ. Նոյնը, որ այս պաշտօնին մէջ իր հակառակ ընթացքով զգուցեցեց ամենքին: Դեռ իր երեսփոխանութեան մէկ ու կէս տարի չանցած՝ ժողովրդի կամքին հակառակ այնպիսի գործեր սկսեց, որ ժողովուրդը ստիպվեցաւ նորան ժամանակից առաջ իր պաշտօնից արձակել: Որքան համար անցեալ տարի խնդրագրով դիմեցին վիճակալին կօնսիստօրին: Բայց ի դուր անցան ինչպէս ժողովրդի աշխատութիւնները՝ նոյնպէս կօնսիստօրինայի հրամանագրերը, որոնք ստիպում էին պ. Թ. Նոյնը երեսփոխանութիւնից հեռանալու: Նա իր մի ակնկալութեան համար անպատճառ կամեցաւ մնալ իր պաշտօնին մէջ մինչև իր երեսփոխանական ժամանակի լրանալը: Այս տարի դեկտեմբեր ամսին լրանալու է նորա երեք տարեկան ծառայութեան ժամանակը: Պ. Թ. Նոյնը լաւ գիտնալով, որ ժողովրդի բարձր և միջին դասակարգի մարդիկ իր փոխանակ մի այլ և բնութիւնան կը տարեն, առաջուց իր պատրաստութիւնն է տեսել մի այլ երեք տարի ևս երեսփոխանութիւն անելու և իր սրտի ուզածը հակառակ ժողովրդի կամեց կատարելու: Նա ստորին դասակարգի սոխ և կարոտքէլ ծախող մարդոցմէն դուրսկիցն էր և կազմել իրան երեսփոխան ընտրելու համար: Չը գիտեմ թէ ինչ վարձատրութիւն ունէ պ. երեսփոխանը այսպիսի ծառայութեան մէջ զուր տեղը ժամանակ կորցնելով՝ մինչդեռ ինքը հազար ու մէկ վաճառականական, դատատանական և այլ ճակնա գործեր ունի կատարելու: Շատերը ասում են, որ նա եկեղեցուն թոփալ Ս. Ի. հոգւո համար է ծառայութիւն անում, ուրիշներ թէ շատ շահախնդրութեան և փառասիրութեան համար է, իսկ երրորդները, որ աւելի հաւանական է, ասում են, որ իր սիրելի տէր պապայի ամուսնեան համար նեցուկ է, որովհետեւ նոքա միմեանց շատ են սիրում և ուզածները միտին են կատարում:

Տեղւոյս ծխատէր քահանայ մեծի պահոց օրերում ամեն խոստովանողից զբառանալից անունով բաւական մեծ գումար է հաւաքում, որ Ջատկից յետոյ պատարագներ մատուցանէ: Արժ. հայրը ինչպէս ամեն նոյնպէս և այս բանի մէջ անապշել է վարձում ժողովրդոց հետ: Նա ոչ թէ պատարագներ է մատուցանում, այլ և հասարակ ժամերգութիւն էլ չէ անում և ամբողջ տարվան մեծ մասը առանց պատարագների և առանց հասարակ ժամերգութեան թողնում է եկեղեցին: Նոյն իսկ շաբաթ օրերը առանց պատարագի են լինում: Նոյն քահանայ Ջատկից յետոյ Գաբրիէլ արքիեպիսկոպոս Ալիսդեանի հոգեհանգիստը կատարեց: Հոգեհանգիստի հանդէսը ժողովրդին բուրովին հակառակ պատկեր էր ներկայացնում. եկեղեցու մէջ սեղանի վրա դրված էին սաղաարդ, վախճող, որոնց մէջ բազմած էր հանգուցեալ Գաբրիէլ արքիեպիսկոպոսը: Լուսանկար պատկերը, որին խնդրելու էր պատարագի քահանայ: Ժողովրդից շատերը եկեղեցուց դուրս տրանջում էին այս երկդիմի վրա: Նոքա սկսեցին անկիւններից մեծ մեծ խօսել, բայց հրապարակ դուրս դալ և կատուի վրէժն զանգակ կախել չը համարձակեցան: Առանց ասում է, զիճուճը պորմեցաւ իրան խուփը գտաւ:

Յօգուտ վանայ սովեցող Սիմֆերոպոլի Գրիգորեան հայրը, որոնք թուով 200 տնից աւելի են, ընդհանուր ստորագրութիւնով նուիրեցին 316 ռ., իսկ 90 տուն հայ կաթողիկոսները բացի ընդհանուր ստորագրութեան մասնակցելուց (ժող 50 ռ.) յօգուտ վանայ սովեցող իրանց եկեղեցու մէջ հանգանակեցին 330 ռ., առանց նուիրատուաց ցուցադրի: Բոլորովին հակապատկեր է Սիմֆերոպոլին Մեկտուպոլ քաղաքը, որի 25 տուն հայն նոյն նպատակի համար նուիրեց 218 ռ.: Արդեօք, ինչով կարելի է բացատրել Սիմֆերոպոլի Գրիգորեան հայրերի անտարբերութիւնը դէպի իրանց թշուառ արիւնակից եղբայրները, եթէ ոչ ժողովրդի մէջ դեր կատարող անձանց թուութեամբ և շահասիրութեամբ:

Հոգեւոր իշխանութիւնը շատ անհոգութեան է թողել իրիմու վիճակը. կայ քաղաք ուր երկու քահանայ կարող է ապրել և մէկ քահանայ կայ, և կան քաղաքներ ուր մէկ քահանայ հա-

զիւ է կառավարվում: Օրինակի համար Սիմֆերոպոլը, որ 200 տնից աւելի լուսաւորական հայ բնակիչ ունի առատութեան մէջ մի քահանայ է պահում, որ, իրան աւելով, շատ ծանրաբեռնած է այլ և այլ գործերով և դատերով, իսկ Ղարա-սուի 150 տուն հայ բնակիչները երկու քահանայ ունեն, որոնցից մէկը ժողովրդին ծանր բեռ է լինելով, զգուցեցեց պատճառ է լինում: Եւ պատրիար, Սեաստօպոլ և Եւստայ ծովեղբայր քաղաքները, որոնք միմեանցից թէ ցամաքով և թէ ջրով հեռու են, և որոնց մէջ հազիւ թէ 30 տուն հայ բնակիչ լինի, նրանց էլ մի քահանայ է հովելում: Որին իրան յանձնած քաղաքների մէջ մի բնակարան էլ չեն տալի, այլ ապրում է Սիմֆերոպոլի մէջ: Մեկտուպոլը վերոյիշեալ քաղաքների բոլորովին հակառակ պատկերն է, որի 25 տուն հայերը մէկ քահանայ են պահում, որ իր գիտութիւնով զգուցեցել է տեղացիներին կարծես Ղրիմու վիճակի հայերին միշտ վիճակվել է խաղաղը դառնալու եկեղեցականների ձեռքին, ինչպէս անցեալում և այժմ Սիմֆերոպոլի հայերը:

Մինչև անցեալ տարի տեղիս արքունի արական և իզական գիմնադիւնների մէջ հայոց լեզուի և կրօնի դասեր չէին աւանդվում: Անցեալ տարի Տաւրիկեան նահանգի ուսումնարանների հոգաբարձուի թոյլտուութիւնով որոշվեց, որ տեղական քահանայի զատակութիւն անէ: Ելառաք (Ս. քահանայն առաջարկում է ժողովրդոց, որ ինքը ձրի դաս կը տալ գիմնադիւններում միմիայն թէ ժողովուրդը իրան մի պատանշանի արժանացնէ: Այս տարի մարտ ամսին դեռ ևս մէկ դպրոցական տարին չը վերջացած, նա գիմնադիւնները գնալ գալու համար ժողովրդից զեաւոր փողոց անունով բաւականին գումար ժողովեց հայ հասարակութիւնից, մի և նոյն ժամանակ պատուանշանների համար էլ ստորագրելու խնդրագրերը առաջարկեց: Չը գիտեմք թէ ինչու տէր պապայ այնպէս վարվեցաւ իր տուած պայմանի հետ, իմ կարծիքով, առաջ պէտք է շատ ցանկ, որ յետոյ լաւ հնէք: Հետոյ այս սխալագործ քահանայն պատուանշաններով վարձատրվելու է հոգեւոր իշխանութիւնից, որովհետեւ ստորագրած խնդրագրերը արդէն ուղարկված է Ս. Էջմիածին:

Ա. Յ. Ա.

ՆԱՄԱԿ ԴԵՐԻՆԵՆԻՅՑ

Ապրիլի 23-ին

Վանի սովատանջներին օգնելու համար Գէրբնդում բացած ստորագրութիւնը աշխատութեամբ պ. պ. Յակովբ Գալստեանցի, Գէորգ Դանադարեանցի և Սարգիս Դանադարեանցի 260 ռ. գումար, որ և ուղարկելով ձեզ, խնդրում ենք հասցնել ուր հարկն է: Արեւմտ Մարտիկեանց 15 ռ., Յովհաննէս Աստուածատրեանց 15 ռ., Գէորգ Դանադարեանց Գէ Դափուր 15 ռ., Յովսէփ Բալայեան Գուկասեանց 10 ռ., Գասպար Ամիրեանց 10 ռ., Յովհաննէս Ելչարեանց 10 ռ., Ալեքսանդր Գեօղականց 10 ռ., Ալեքսանդր Գեօղականցի ձեռամբ հանգուցեալ Նազար Գաղեանցի (գործի) 10 ռ., Յակովբ Գալստեանց 5 ռ., Սարգիս Դանադարեանց 5 ռ., Սերգէյ Միկիլեանց 5 ռ., Յակովբ Եւաղեանց 5 ռ., Արսէն Դանադարեանց 5 ռ., Ջալալ Միկիլեանց 5 ռ., Աւետիս Աղամալեանց 5 ռ., Յարութիւն Ապրեանց 5 ռ., Յարութիւն Աղարեանց 5 ռ., Առաքել Բաբայեանց 5 ռ., Կարապետ Օրբէլեանց 5 ռ., Գաբրիէլ Տէր-Մարտիրոսեանց 4 ռ., Գաբրիէլ Իշխանեանց 3 ռ., Սողոմոն Սարաջեանց 3 ռ., Անանիա Եակոբեանց 3 ռ., Նիկողայ Աւանեանց 3 ռ., Կ. Կաչերցի 3 ռ., Քաչերցի մանօր 3 ռ., Փառնդիւր Մէլիք-Գալայեանց 3 ռ., Յովհաննէս Աղաբաբեանց 3 ռ., Աւետիս Պողոսեանց 3 ռ., Ուղարկել 3 ռ., Յակովբ Մանուէլեանց 3 ռ., Եօթն 3 ռ., Յովսէփ Յովհաննէսեանց 3 ռ., Միրզայ Յովակիմեանց 3 ռ., Յովսէփ Բէկ Աւարեանց 3 ռ., Յարութիւն Դանադարեանց 3 ռ., Ռաֆայէլ Իշխանեանց 2 ռ., Յովհաննէս Խաղաղեանց 2 ռ., Յովհաննէս Համբարձումեանց 2 ռ., Ռոստոմ Պապայեանց 2 ռ., Աթանէս Պողոսեանց 2 ռ., Գաբրիէլ Օրբէլեանց 2 ռ., Յովսէփ Մ. Դանադարեանց 2 ռ., Մարգարէ Սարգիսեանց 2 ռ., Յովսէփ Աղաբաբեանց 2 ռ., Գրիգոր Զիւլալեանց 2 ռ., Յիւսէպ Գաղաշ Օլիւ, հրէայ 2 ռ., Յակովբ Աղաբաբեանց 2 ռ., Յովհաննէս Խաղաղեանց 2 ռ., Կոստանդին Մեկլէ Դանադարեանց 2 ռ., Պետրոս Հասան Զալալեանց 1 ռ., Արշակ Դանադարեանց 1 ռ., Յովսէփ Եղաղեանց 1 ռ., Իւանօւ 1 ռ., Սահակ Պողոսեանց 1 ռ., Խաչատուր Պետրոսեանց 1 ռ.,

Մարտիրոս Օհանեանց 1 ռ., Յովհաննէս Մուսայեանց 1 ռ., Համբարձում Դադարեանց 1 ռ., Զաքարիա Տէր-Պետրոսեանց 1 ռ., Յարութիւն Մալինցեանց 1 ռ., Գաբրիէլ Գրիգորեանց 1 ռ., Միքայէլ Տէր-Մարտիրոսեանց 1 ռ., Մկրտիչ Ամիրեանց 1 ռ., Ախնադարեանց 1 ռ., Առաքել Դանադարեանց 1 ռ., Անդրէաս Հայրապետեանց 1 ռ., Անյայտ ոմն 1 ռ., Աղաջան Մեկլէ Գաբազանեանց 50 ռ., Յարութիւն Պողոսեանց 50 ռ., Յովհաննէս Դանադարեանց 1 ռ., Սողոմոն Կիւրիակեանց 6 ռ., Օմար-Բէկ Կիւրիակեանց 4 ռ., Գումարն է 260 ռ.:

Յ. Գալստեանց

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆԵՆԵՆԻՅՑ

5 մայիսի

Այս տարի Անդրկովկասի գաւառների մէջ ամենից աւելի սարսափելի դրութեան մէջ էր Նախիջևանի գաւառում: Ազուլիսը իր չընկալ պիտեւրով, որովհետեւ տաւն և եօթ գիւղ, ի թիւս ներքին և Օրդուբաժը գիւղ են կանոնաւոր երկրագործութիւնից: Այն գիւղերից մէջ մի քանի գիւղեր բոլորովին հաց չեն ցանում հող չունենալու պատճառով, իսկ մնացեալն էլ հազիւ երկու երեք ամսվայ պաշար են ձեռք բերում իրանց վարձեցանքից, ուրեմն միջին թուով մէկ տարվայ ընթացքում մէկ ամիս իրանց սեպական ցանքի պտղով են կերակրվում, իսկ տաւն և մէկ ամիս ծախու են առնում Նախիջևանի չընկալներից: Հէնց այդ էր պատճառը, որ ժողովուրդը այսքան սարսափելի վիճակի մէջ տանվում էր և այստեղ նոյն վիճակի մէջ է քիչ զանազանութեամբ, մինչդեռ պտղը 50 կոպէկ ժամանակն էլ այստեղի թուրք աղաքանակութիւնը մեծ գիւղարութեամբ էր հաց ձեռք բերում, ապա 9 բուրդով պտղը ու գործելիներն ինչպէս կարող են աւանդ: Այս տարի տեղիս թուրքերը մի այնպիսի սուր հարուած ստացան, որ չեմ կարծում տարիների ընթացքում խեղճերը կարողանան չունչ քաշել. համարեա թէ զրկված են տնային ամենայն տեսակ կահկարասիքից, շատերը մի բաժակ ջուր տաքացնելու ամանի կարօտ են: Բայց տեղիս թուրքերը իրանց կենցաղով պարտական են պ. պ. Տէր-Միքայէլեանցին և Աղեքսանդր Տէր-Մկրտչեանցին, որոնք բացի մատչելի գնով իւրաքանչիւր իրանց շտեմարանից ցորեն վաճառել, ձեռք ձեռքի տուած բացարկն մի հացթուխի խանութ և շատ էժան գնով հաց են վաճառում և մինչև անգամ ոմանց ձրի են տալիս: Մեր ազուլեցի հայերի համար պատիւ են բերում այսպիսի աղնուհանգի և մարդասեր պառնները, որոնք լաւ ըմբռնել են մարդկութեան սրբազան պարտականութիւնը: Չը պէտք է մոռանալ, որ մեր ազուլեցի միւս պարտներն էլ իրանց կարողութեան չափ չը զղացան օգնութեան ձեռք կարկառել կարօտեալներին, որոնք արժանի են նմանապէս հրապարակաւ շնորհակալութեան, թէ և նրանցից շատերն աւելի կարող էին անել: Նրանք կազմեցին մասնաժողով և ամենայն ջանքով աշխատեցին թեթեւեղեղ աղքատ դասի վիճակը, իսկ թուրքերից ունեցողն էլ միայն իրան համար էր մտածում: Հայերը հասկացան մի այսպիսի գործի համար մասնաժողովի անհրաժեշտութիւնը, իսկ երբ թուրքերին հրաւիրեցին մասնակցել, նրանք հրաժարվեցան մասնակցելուց, վասն զի նրանք դեռ այնքան զարգացած չեն, որ հասկանան մարդկութեան պարտականութիւնը: Թէ և այս տեսակ օժանդակութիւնը ժողովրդոց դրութիւնը մասամբ թեթեւեղեղ, բայց ոչ բոլորովին ազատեց նրանց սովի հարուածից. շատերը կերակրելով մէկ մեծ մասամբ կանաչ խոտով և համարեա թէ առողջութեան նշույլ չէ մնացել նրանց երեսների վրա: Բայց աւելի մեծ և սարսափելի թշուառութիւն էր սպասվում, եթէ խնութեան առատ պարգևով լիակատար վարձատրված արտերի բերքը չը լինէր այս տարի այս կողմերում: Եւ տեսնելով մի այնպիսի անսպասելի առատ բերք, ամենայն ծակուծակից, ամենայն զուշուպուշուշուց դուրս բերին հաց և լեզրին հասարակութեան առաջը, այնպէս որ 9 բուրդուց յանկարծ իջաւ 4 բուրդ և յոյս կայ որ շատ ցածրանայ: Զարմանալի տեսարան. կրէկվայ սպառնալից սովի ասպարէզը, այսօր առատութեան շտեմարան է դարձել, երէկվայ սուղը և հեծեծանքը այսօր տեղի է տըվել ուրբանութեան և ցնծութեան աղաղակների, երկվայ մեռելային տիպերը այսօր հոգի և կենդանութիւն են չնչում: Բայց արդեօք ազուլեցիք այս դառն փորձութիւնից յետոյ մտածելու են մի գիւղական խնայողական ընկերութիւն կազմելու և ամենայն տեսակ ուսելիքներ միջնորդող հիմնադրում: Եւ այսպիսի սարսափելի հարուածներ

ին չենթարկվեն, և որ աւելին է, ծանրութիւնը մի կամ երկու անհատի ուսի վրա չը դնեն. Գալստեանց և Աղեքսանդր Տէր-Մկրտչեանցը և Ազուլիսի հասկացող դասը հիմնադիր կը լինեն այս հասարակագոյն հիմնարկութեան: Սպասեմք:

Ազուլեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Յունիսի 3-ին

«Մշակի» 86 №-ի լուրերի մէջ կարդացի օրիորդ Կիրիսթէթ Ալիխանեանցի նամակը, որից տեղեկացայ թէ վերջացած ունէ Հօֆմանի «Արքա-համ Լինկօլն», կամ գերիների ազատողը գրքի հայ թարգմանութիւնը և աւելացնում է՝ «որովհետեւ մի ուրիշ անձն էլ թարգմանել է նոյն գիրքը, ուրեմն զուր անցաւ իմ աշխատութիւնը»: Թող տուէք ինձ նկատել, որ այդպիսի աշխատութիւն երբէք զուր չէ անցնում, այլ պատկում է՝ նախկինով արժանաւորութեան:

Եւ որովհետեւ 19-րորդ դարի երկրորդ կէսից սկսվում է իզական սեռի ընդհանուր շահերին ծառայող գործունէութեան առաջին քայլը, նրան քաջաբերելու համար խոստովանում եմ, որ նոյն գիրքը թարգմանած պատրաստ ունեմ, բայց միջոցներ չունենալով, կը խնդրէի ինձ անձանթ օրիորդից, որ եթէ միտք ունի կարճ միջոցում հրատարակելու, կարող է:

Թող տուէք, յարգելի խմբագիր, մեծ ուրախութեան հետ մի փոքրիկ բարեմիտ նկատողութիւն անել ինձ անձանթ օրիորդին: «Արքա-համ Լինկօլն» ոչ թէ գերիների ազատող է, այլ «ստորկանների ազատող»:

Յ. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказ» լրագիրը լսել է որ Կովկասեան կառավարութիւնը դիտաւորութիւն ունի ժողովրդագրութիւն անել նոր նուաճված երկիրներում: Կարսի և Բաթումի վիճակներում:

Հաստատա աղբիւրներից լսում ենք, որ պ. Աղա-ման մի քանի այլ երկրաստորդների հետ գնալու է Ախալցխա և ուրիշ մեր գաւառական քաղաքները ներկայացումներ տալու դիտաւորութեամբ: Պ. Աղամանի հետ, որքան մեղ յայտնի է, գնալու են պ. պ. Սաֆարեանց և Հովսէփեանց:

Մեզ գրում են, որ Հին-ՆԱԽԻՋԵՆԻՍԻ կողմերում արտերը շատ առատ են և արդէն դարին հնձվել է: Մահմետականները այսու ամենայնիւ շատ թշուառ գրութեան մէջ են և մի քանիները հաց չունեն և մուրալ ամաչում են:

Լսում ենք որ ԵՐԵՎԱՆԻ նահանգի կարօտեալներից շատերը դիմում են Էջմիածին և հաց են խնդրում, բայց դատարկ և յուսահատ յետ են դառնում, որովհետեւ նրանց պատասխանում են թէ Էջմիածին հացը հազիւ թէ բաւական լինի միաբնակեան համար:

Գրիգոր և Հովսէփ Անեան դերձիկներից ստացանք 11 ռ. 50 կոպ. յօգուտ վանի սովատանջների հետեւալ նամակով: «Այս գումարը գոյացել է մեր արդիւնքի 50% մասից, որ մենք յատկացրել էինք մեր սովատանջ եղբայրներին: Հնորակալութիւն ենք յայտնում Ազուլեցի տիկիներին, որոնք չը նայելով, որ ունէին իրանց մշտական դերձիկ, այսու ամենայնիւ կարգաւոր մշակում մեր յայտարարութիւնը, իրանց պատէքները մեզ են անում այժմ, որպէս զի նպատակն մեզ սովակու-ներին աւելի մեծ գումարով օգնելու: Իսկ Թիֆլիսի կանայք երեւի չեն կարողում «Մշակ» և հետեւալը չեն էլ իմացել որ մենք մեր եկամտուի յայտնի տուողը Հայաստանի սովատանջներին ենք նուիրում: Այժմ մենք պարտք ենք համարում յայտնել Թիֆլիսի հայ տիկիներին, որ այս ամառվայ հունձը արդէն հասած լինելով, շուտով կը ձառագրուէ մեր նուիրատուութիւնը:







